ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3813-Ա « 03 » օգոստոսի 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ Հ.74 ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-ԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետի 2026 թվականի ապրիլի 20-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի սահմանները ճշտելու, հատակագիծ թողարկելու և հասցե տրամադրելու մասին» հ.2080-Ա որոշման հիման վրա ճշտվել է Ջրաշենի 1-ին փողոցի հ.41 հասցեում գտնվող, «Երևանի հ.74 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի զբաղեցրած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի սահմանները և գրանցվել Երևան համայնքի անվամբ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07072026-01-0349 վկայական /0.21943հա հողամաս, 956.8քմ շինություն, 20.4քմ, 20.4քմ, 20.4քմ շվաքարաններ, 16.7քմ, 36.74խ.մ. պարիսպ/:

Ղեկավարվելով քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշման հավելվածի 46-րդ կետը.

1. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին, Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Երևանի հ.74 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հետ կնքել համաձայնագիր՝ 2016 թվականի ապրիլի 2-ին կնքված գույքի անհատույց օգտագործման հ.1193 պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին, ներառելով հետևյալ փոփոխությունները.

1) պայմանագրի 1.1 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Սույն պայմանագրով Փոխատուն պարտավորվում է Փոխառուի անորոշ ժամկետով անհատույց օգտագործմանը հանձնել 956.8քմ մանկապարտեզ, 20.4քմ, 20.4քմ, 20.4քմ շվաքարաններ, 16.7քմ և 36.74խ.մ պարիսպ մակերեսներով շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 0.21943հա մակերեսով հողամասը, այսուհետ՝ «Գույք», որը գտնվում է Ջրաշենի 1-ին փողոցի հ.41 հասցեում».

2) պայմանագրի 1.2 կետում՝ «անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 09.01.2002թ. հ.605161 վկայականի» բառերը փոխարինել «անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.07072026-01-0349 վկայականի» բառերով.

3) պայմանագրի 6.2 կետից հանել «ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ կամ» բառերը:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) սույն որոշման 1-ին կետում նշված համաձայնագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում.

2) պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են «Երևանի հ.74 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից:

3. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246